

Պաղեստինեան Համաս կազմակերպութեան Լիբանանի ղեկավարը՝ Ուսամա Համուսն ըսաւ, որ այսուհետեւ իսրայէլացի ղեկավարներու ահաբեկումը պիտի ըլլայ կազմակերպութեան նոր գործելաձեւը, փոխան՝ անձնասպանական գործողութիւններուն: «Իրենք Համասի ղեկավար կը սպաննեն, մենք սինիսթ ղեկավարները պիտի ահաբեկենք», կ'ըսէ Համուսն:

Համասի այլ պատասխանատու մը ըսաւ, որ անձնասպանական գործողութիւնները փոխանակ քանի մը տասնեակ իսրայէլացի սպաննելու, պէտք է այսուհետեւ թիրախ ունենան Արիէլ Շարոնը:

(ՌՈՅԹԸՐԶ)

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԻՆՔՆԱՊԱՐՏԱԳՐԱՆՔՈՎ ԻՐԱԳՈՐԾԵԼ ՍԵՒՐԻ ՍԱՀՄԱՆԱԳԾՈՒՄԸ

(Սեւրի դաշնագիրին 82ամեակին առիթով)

Հայաստանի Առաջին Հանրապետութեան ամէնէն հիմնական իրագործումներէն կը նկատուի Սեւրի դաշնագիրը, որ իրաւական փաստաթուղթն է Միացեալ Հայաստանի առաջադրման, հողահաւաքին կամ հողային պահանջատիրութեան:

Ճիշդ է, որ քաղաքական կեանքին մէջ հայրենիքներու սահմանագծումը յաճախ կը կատարուի գերպետութիւններու հողային առեւտուրի շրջածիրին մէջ եւ ժողովուրդներու հայրենիքները կը սահմանագծուին աշխարհագրաքաղաքական տեսարարներու վրայ:

Պատահած է, որ երկիրներ անկախանան, հողատարածքները պատագրուին կամ հայրենիքներ սահմանագծուին առանց խնդրոյ առարկայ ազգաբնակչութեան դերակատարութեան: Անսխալաբար չէն նաեւ անկախացման ստիպողական հոշակագրերը կամ ազգերու համադաշնակցութեան քայքայումին իբրեւ հետեւանք յայտարարուած անկախութիւններու երեւոյթը:

Միջազգային քաղաքականութեան կամ միջպետական յարաբերութիւններու մէջ տեսականօրէն յարգելի են ազգային ինքնորոշման իրաւունքները, պատու անկաշկանդ ապրելու եւ բարգաւաճելու տարրական իրաւունքները, պատմական հայրենիքներու հողային ամբողջականութեան անձեռնմխելիութիւնը: Սակայն, տեսութիւնն ու գործնական բաժինը, յատկապէս քաղաքական յարաբերութիւններու մէջ առհասարակ կը մնան անհամապատասխան եւ իբրեւ այդպիսին՝ կը շեշտեն ոչալ փոխթիթի առնուապէս ապարտոյ էութիւնը:

Այս իրականութեան գիտակցումով Սեւրի դիւանագիտական յարթանակը կարելի չէ արժեւորել իբրեւ հայ ժողովուրդին հողային իրաւունքները ճանչցող պոստ հայանքապատ կամ իր բացարձակին մէջ արդարացի եւ վեհանման կեցնուած: Վերի հաստատումներուն նկատառումով Սեւրի նուիրականացումները պէտք է դիտել Թուրքիոյ նկատմամբ շրջանով շահագրգռուած պետութիւններուն կիրարկած քաղաքականութեան լոյսին տակ: Միացեալ Հայաստանի միջազգային ճանաչումը, դաշնագիրին մասնակից պետութիւններուն համար բնականաբար ճնշմանց եր Թուրքիոյ դէմ: Լօպանը հետագային փաստեց, որ միջազգային դիւանագիտական այլ փաստաթուղթի մը ստորագրութեամբ կարելի էր վերջ տալ ճնշմանցին, թէկու՛ք ժողովուրդի մը հայրենիքին նոր սահմանագծում տայով:

Սեւր-Լօպանի քաղաքական փոխտարաբարութիւնը առաւել էւ համոզեց հայ քաղաքական մտածողութիւնը, որ հայ ժողովուրդին դաւանած հայրենիքին սահմանները պէտք է դուրս բերել միջպետական քաղաքական թէ հողային առեւտուրի ծիրէն եւ ինքնապարտադրանքով առաջադրել պատմական հայրենիքի հողային ամբողջականութեան կերտումը:

Սակայն Սեւր անհրաժեշտ էր իբրեւ միջազգային իրաւական փաստաթուղթ, որուն հիման վրայ հայրենիքը իր քաղաքական առաջադրանքին պիտի վերածէր Միացեալ Հայաստանի կերտումը: Եւ իբրեւ այդպիսին, Հայաստանի Հանրապետութեան օրէններ կայացուցանելու ներկայացուցիչներուն նախասերեան աշխատանքները՝ Խաղաղութեան Վեհաժողովի Խորհուրդին մօտ տարուած անդու հետապնդումները, շրջանային քաղաքական իրադրութեանց իրապաշտ վերլուծումով Ահարոնեաններու կողմէ ճիշդ ծամանակահատուածին հարցին արծարծումը, ինչպէս նաեւ Թուրքիոյ նկատմամբ նկատի առնուած ճնշմանցի գործօնը յանգեցան Սեւրի դիւանագիտական յարթանակին, որ պաշտօնական ճանաչումն էր հայ ժողովուրդին կողմէ առաջադրուած Միացեալ Հայաստանին:

Սեւրը մեկի կը թելադրէ պատմաքաղաքական նման նախարկելու մօտեցումով շարունակել փաստաթուղթը ապահովելու աշխատանքը Հայկական Յեղասպանութեան միջազգային ճանաչման թէ հայաստանի Արցախի հողատարածքներու միջազգային սահմանագծումի մեր պահանջատիրական երթին համար:

Միաժամանակ՝ պիտուի մարդուծով, արհեստագիտութեամբ, տնտեսական ուժով եւ բանակով, որպէսզի անշրջանցելի ըլլայ ձեռք ձգուած քաղաքական որեւէ յաղթանակ, եւ որպէսզի որեւէ Լօպան չյաջողի իսփանել Սեւրերով նուիրականացած հայ ժողովուրդի իրաւունքներուն յարգումը:

ՎԱՂԸ՝ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Լեռնային Ղարաբաղի մէջ վաղը տեղի կ'ունենան նախագահական ընտրութիւններ: Չորս թեկնածուներ կը պայքարին նախագահական աթոռին համար, ժողովրդավար միջնորդի մէջ: Անոնք են՝ ներկայ նախագահ Արկաղի Ղուկասեան, որ շատ հաւանաբար վերընտրուի բացարձակ առաւելութեամբ: ան շատ մը կազմակերպութիւններու կարգին կը վայելէ նաեւ Հ. Յ. Դ. Գորակցութիւնը: Միւս երեք թեկնածուներն են Արթիւր Թովմասեան, Ալպէրթ Ղազարեան եւ Կրեկոր Աֆանասեան:

ԼՂՀԻ ա. գ. նախարարութիւնը կը վստահեցնէ, որ ընտրութիւնները պիտի ըլլան արդար եւ թափանցիկ:




Արկաղի Ղուկասեան

Վանցիկ: Ընտրական գործընթացին հետեւելու համար արդէն իրաւունք ստացած են աւելի քան հարիւր միջազգային դէտեր եւ լրագրողներ՝ Մ. Նահանգներէն, Ռուսիայէն, Ֆրանսայէն, Բրիտանիայէն, Իտալիայէն, փանցիկ: Ընտրական գործընթացին հետեւելու համար արդէն իրաւունք ստացած են աւելի քան հարիւր միջազգային դէտեր եւ լրագրողներ՝ Մ. Նահանգներէն, Ռուսիայէն, Ֆրանսայէն, Բրիտանիայէն, Իտալիայէն,




Արթիւր Թովմասեան

Անգլիայէն եւ այլ երկիրներէ: Դէտերու շարքին կան նաեւ ամերիկացի քոնկրէտէն Ֆրանք Փալոն եւ բրիտանացի խորհրդարանական Քարոլայն Բոքս, որոնք ծանօթ են իրենց հայանպատ աշխատանքներով:



Ալպէրթ Ղազարեան



Կրեկորի Աֆանասեան

ԱՐԻՏԻ ԵՒ «ԷԼ. ՊԻ. ՍԻ.» Ի ՈՒ «ԷՄ. ԹԻ. ՎԻ.» Ի ՀԱՐՅԸ



Տեղեկատուութեան նախարար Ղապի Արիտի երէկ ժողով մը գումարեց լրատուութեան լատենտիական միջոցներու ներկայացուցիչներուն հետ, ապա՝ յայտնեց, որ ժողովին ընթացքին միաձայնութիւն կար, թէ «Էլ. Պի. Սի.» եւ «Էմ. Թի. Վի.» հարցը դատական իշխանութեան փոխանցուած է եւ ան է, որ պիտի վճռէ, թէ օրէնքի խախտում գործուած է կամ ոչ:

Թղթակիցներու հարցումներուն պատասխանելով, ան ըսաւ, որ «Էլ. Պի. Սի.» հարցով ինք կատարած է տեղեկատուութեան նախարարի իր պարտականութիւնը, իսկ «Էմ. Թի. Վի.» հարցէն ինք տեղեկակ չէր. «Թէեւ օրէնքով պարտաւոր չեն պիտեղեակ պահելու, բայց պետական կառոյցներուն միջեւ համակարգումի ծիրէն ներս նախընտրելի պիտի ըլլայ պիտեղեակ պահել», ըսաւ ան:

«Էլ. Պի. Սի.» գծով տուած որոշումիս եւ առած քայլիս կը ցաւիմ, բայց համոզուած եմ, որ անկիս է ճիշդ ընթացքը», ըսաւ Արիտի:

Արդէն շուկային վրայ է միջազգային հռչակ վայելող հայկական «KOTAYK» գարեջուրը: «KOTAYK» գարեջուրը շահած է 3 ոսկի մետալներ՝ ՍՈՉԻԻ, ՍԱՏՐԻՏԻ եւ ՄՈՍԿՈՒԱԿի միջազգային փառատօներուն ընթացքին, իսկ Նիւ Եորքի մէջ տիրացած է «PLATINUM» մետալին: «KOTAYK» գարեջուրը կրնաք գտնել բոլոր սիւվերմարքէթներուն եւ նպարավաճառներուն մօտ: Մեծաքանակ վաճառքի համար կրնաք դիմել «UNIVERSE» հաստատութեան կամ ցրուիչ «VAK TRADING COMPANY»-ի: Հասցէ՝ Պուրճ Հաւուտ, Փոլիկարպոս, «Սարդարապատ» շէնք: Հեռաձայն՝ 03/626177, 03/773609:

Ընդհանուր ներկայացուցիչ Լիբանանի մէջ «LEBARCO» ընկերութիւն «LEBANESE ARMENIAN COMMERCIAL COMPANY»:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

2002 թ. Օգոստոսի 11ին ԼՂՀ-ում կը կայանան նախագահական հերթական ընտրութիւններ: Միջազգային ճանաչման ձգտող պետութեան ղեկավարի ընտրութեան ժողովրդավարական ընթացակարգը սկսելու քայլին դիրքորոշում է հանրապետութեան ղեկավարութեան համար, որը նպատակ ունի իր տարածքում կառուցել քաղաքացիական հասարակութիւն:

Մենք ելնում ենք այն համոզմունքից, որ միայն պատ ընտրութիւններին հիման վրայ ձեւաւորուած իշխանութիւնն ունի ժողովրդի կողմից վերապահուած իստիպողական կողմնակցութիւններ վարելու լիազորութիւններ եւ պատասխանատուութիւն է կրում միջազգային հանրութեան առջեւ ստանձնած քաղաքական -իրաւական պարտաւորութիւններին համար:

Վերջերս սարսփեցնական կողմը դիմում է տարբեր պետութիւններին եւ միջազգային կազմակերպութիւններին՝ կոչ անելով դատապարտել Լեռնային Ղարաբաղում ընտրութիւններին անցկացման փաստը ինքնին: Այդ առթիւ մենք ստիպուած ենք ուշադրութիւն հրաւիրել առ այն, որ կեղծ ժողովրդավարական միջոցներով սարսփեցնական իշխանութիւնները ներկայումս մտահոգուած են իրենց երկրում բռնապետական ռեժիմի ամրապնդման խնդրով, ինչը սրել է ներքաղաքական իրավիճակը երկրում, եւ ինչպէս յայտնի է, բացասական արձագանգ է գտել միջազգային ազդեցիկ կազմակերպութիւններին եւ պետութիւններին շրջանում: Հենց այդ պատճառով պաշտօնական Պաքուն բացում է թոյլ չտալ այն ակնյարտ փաստի բացայայտումը, որ կայուն քաղաքացիական հասարակութեան ստեղծման առումով ԼՂՀ-ն առաջ է անցել Արարկայէն:

Այս համատեքստում տարակուսանք են առաջացնում Եւրոմիութեան նախագահութեան եւ Եւրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի նախագահի յայտարարութիւնները՝ Լեռնային Ղարաբաղում նախագահական ընտրութիւններին անցկացման անիրաւունակութեան մասին, ինչը կարելի է գնահատել որպէս փորձ՝ հակադրելու ժողովրդավարական գործընթացներին խորացմանը մի տարածքում, որը աշխարհագրական առումով արդէն իսկ գտնուում է եւրոպական պատասխանատուութեան գոտում:

Կարող է այնպիսի տպաւորութիւն ստեղծուել, որ տուեալ կազմակերպութիւնները, հակառակ իրենց հռչակած սկզբունքներին, քաղաքական աջակցութիւն են ցուցաբերում մի վարչախմբի, որը յայտարարում է Լեռնային Ղարաբաղի ժողովրդի հանդէպ ուժ գործադրելու պատրաստակամութեան մասին: Արարկայէնում մարդու իրաւունքներին կոպիտ խախտումներին մասին, ընդհանուր առմամբ, վկայում են պարզ պէտքեանական խաղաղ բնակչութեան դէմ վերջերս կիրառուած պատմամիջոցները, ինչպէս նաեւ հարիւրաւոր քաղաքատարկեալներին հիմնախնդիրը:

Արտաքին գործերի նախարարութիւնը համոզմունք է յայտնում, որ ԼՂՀ նախագահական ընտրութիւնները կ'անցկացնեն թափանցիկութիւն ապահովելով ընտրական գործընթացի բոլոր մակարդակներում:

Ընտրութիւններին անցկացման ընթացքին հետեւելու համար ԼՂՀ Կենտրոնական Ընտրական Յանձնաժողովում շուրջ հարիւր միջազգային անկախ դիտորդներ են լրագրողներ են գրանցուել ՄՄՍԻց, Ռուսաստանի Դաշնութիւնից, Ֆրանսայից, Մեծն Բրիտանիայից, Իտալիայից եւ այլ երկրներէից:

Ք. Ստեփանակերտ

ԼՂՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

• ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ նախագահ ԿՕՐ. Էմիլ Լահուտ երեկ Պառլամենտի իր բնակարանին մէջ ընդունեց լիբանանեւուտրիական գերագոյն խորհուրդի ընդհանուր քարտուղար Նասրի խուրիւնը և անոր հետ քննարկեց խորհուրդի աշխատանքներն ու երկու երկիրներուն միջեւ ստորագրուած համաձայնագիրներու գործադրութեան ընթացքը:

• ՊԵՏՐՈՒԹԻ աւագ ջնիւզ զատախազ Հաթէմ Մատի երէկ ստանձնեց պատկերասփիւռի «Էմ. Թի. Վի.» կայանին դէմ նախանցեալ գիշեր կատարուած ամբաստանութիւնը՝ Պէյրութի վերադատ տեսանի ընդհանուր զատախազ Ժոզէֆ Մասամարիի կողմէ:

Մատի «Էմ. Թի. Վի.» թղթաբարձր պիտի ուսումնասիրէ եւ հաւանական է, որ յառաջիկայ շաբթուան ընթացքին ճշգրիտ զատախազութիւնը սկսելու թուականը:

• ԸՆԴՀԱՆՈՒՐ զատախազ Անուս Ատունու երէկ ամբաստանեց ԵՈՒՆԵՍԿՕ-ի ռաի-րի պատասխանատու Անէտ Մանսուրը, յուսալով որ ան կը ստանայ մահապատիժ իր գործած ռաիիին համար:

Ատունու ԵՈՒՆԵՍԿՕ-ի ռաիի թղթածրարը փոխանցեց արդարադատութեան նախարարութեան խորհուրդին, որ զատա-

խազ Ժիհադ Ուատին նշանակած է վարելու նշեալ հարցին դատաւարութիւնը:

• ՀԱՆՐՕԳՈՒՏ շինութեանց եւ փոխադրութեան միջոցներու նախարար Նեժիպ Միքաթի երէկ տուաւ մամուլի ասուլիս մը, որուն ընթացքին յայտարարեց թրիփոլի երեսփոխաններուն ուղղած իր կողմէ՝ մասնակցելու հանդիպումի մը, որ նուիրուած է Թրիփոլի յատուկ բարգաւաճման ծրագիրներու ուսումնասիրութեան եւ նախաձեռնութիւններու:

Միքաթի երկրորդելով երեսփոխան Մրայահ ԱՏ-տապի նախաձեռնութիւնը բոլորին կողմէ ղեկ գորակցելու եւ օժանդակելու այս աշխատանքին՝ շնորհակալութեամբ թրիփոլի շրջանը:

• ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹՅԱՆ կաթողիկէ կեդրոնը երէկ հրատարակեց պաշտօնական հաւանքներ, ինչպէս նաեւ խօսքի եւ մտքի ազատութիւնները:

Նշեալ կեդրոնը խստի դատաւարութեան տեղեկատուութեան ապատուութիւնը, ինչպէս նաեւ խօսքի եւ մտքի ազատութիւնները:

Նշեալ կեդրոնը խստի դատաւարութեան տեղեկատուութեան ապատուութիւնը, ինչպէս նաեւ խօսքի եւ մտքի ազատութիւնները:

տեսան պրէզիդէնտական ջննութեանց արդիւնքները: Յաջողութեան համեմատութիւնը հասաւ 63,6 առ հարիւրի:

Արդիւնքները յայտարարուեցան Նապաթիէի կրթական հարցերու պատասխանատու իսլիմ Արզունիի կողմէ, Նապաթիէ պետական երկսեռ վարժարանին մէջ:

• ՄԱՍԼՈՅ հարցերու առեւտրային նախագահութեամբ զատախազ Լապիպ Չուէյնի երէկ արձակեց վճիռ մը, որուն հիմամբ պատկերասփիւռի «Մուսթաքպալ» կայանի լուրերու բաժնի պատասխանատու Անի Համմուտ պիտի վճարէ երկու միլիոն տոլար, իսկ Հանի Մուսթաքա Պայտուն՝ վեց միլիոն տոլար, մինչ «Մուսթաքպալ» կայանը՝ հինգ միլիոն տոլար՝ տոքթ. Ֆուատ Մեթնիի, որ ամբաստանած է կայանը իր դէմ անհիմն կրպարտութիւններ կատարելու յանցանքով:

«Մուսթաքպալ»-էն կը սպասուի, որ այս վճիռը յայտարարէ երկոյեան սպիտակ լուրերէն: Նշեալ լուրը սփռելու պայմանագրով արտաւարտուող 15 օր է:

• ԱՐՏԱՔԻՆ գործոց նախարար Մահմուտ Համմուտ երէկ ընդունեց հարաւի մէջ գործող ՄԱԿի խաղաղարար ուժերու հրամանատար գոր. Լաւրի Թիուարին, որուն կ'ընկերակցէին Իսրայէլի հետ զինադադարին հսկող խմբակի նոր պետ գնդ. Պէրթան Պորթանն ու անոր քաղաքական հարցերու խորհրդական Միլոս Սթրակարը:

Քննարկուեցան Ֆիլիպինի աշխատանքներն ու անոր եւ իրանական իշխանութիւններու գործակցութիւնը: Նշեւք, որ գոր. Թիուարի Սեպտեմբեր 1ին պիտի այցելէ Նիւ Եորք, Ֆիլիպին գործունեութեան մասին տեղեկագիր մը ներկայացնելու ՄԱԿին:

• ԵՐԵՍՓՈՒՍՆ Նապի խորի երէկ այցելեց մարոնիներու Սֆէյր պատրիարքին, ապա յայտարարեց, որ քննարկած են ընդհանուր հարցերը, որովհետեւ կարգ մը թղթածրարներ փակուած են եւ ուրիշներ վերստին լուսարձակի տակ բերուած են:

«Տիրող քաղաքական իրավիճակը վատտող է թէ՛ Քրիսթոֆ Ծրիուանի, թէ՛ քրիստոնէայ երեսփոխաններու խորհրդակցական հանդիպումի ծիրէն ներս, որովհետեւ անոնք ցաւօք քաղաքական կեանքը սահմանափակող կացութիւն կը ստեղծեն պարտադրելով կա՛մ հետը, կա՛մ դէմը ըլլա-

լու դրութիւն», ըսաւ ան:

Խուրի ըսաւ, որ կառավարութիւնը փյաթֆորմ մը կ'ունենայ, իսկ ընդդիմութիւնը՝ տարբեր գործունեութեան ծրագիր կ'ունենայ, բայց Լիբանանի մէջ, ցաւօք, ո՛չ կառավարութիւնը, ո՛չ ընդդիմադիրները նման ծրագիրներ ունին:

• ՈՒԺԱՆԻԹԻ եւ ջրերի հարցերու նախարար Մոհամէտ Ապտէլ Համիտ Պայտուն երէկ իր գրասենեակին մէջ հանդիպումներ ունենալէ ետք քաղաքի վաշտօնատարներու հետ, պատասխանեց թղթակիցներու հարցումներուն, ընդգծելով, որ նախագահ գոր. Էմիլ Լահուտ եւ վարչապետ Ռաֆիք Շարիֆի կրնան զիրար հասկնալ, նշելով որ բլիթային հեռաձայնի բնագաւառը երբեք պետութեան սեփականութիւնը չէ եղած եւ նկատել տալով, որ Սեյիսի եւ Լիպանսիի հետ պայմանագրութիւնները աւարտելու հիմնական նպատակը պետութեան եւ քաղաքացիին իրաւազրկումին վերջ տալ է:

Ան դրա դառնալով ելեկտրականութեան մարզը ապապետականացնելու գործընթացին, Պայտուն դիտել տուաւ, որ նշեալ գործընթացը կը պարունակէ ելեկտրականութեան հոսանք հայթայթող հաստատութեան մէջ աշխատող ռուրի պաշտօնեաներուն աշխատանքի եւ հատուցման երաշխիքները:

Կանաչ մագոլիք ներածելու մասին Պայտուն յայտնեց, որ կառավարութիւնը իր հաւանութիւնը տուած է անոր ներածման եւ ըսաւ, որ արդէն իսկ հաստատութիւններ կրնան դիմումներ կատարել անոր ներածումին համար:

ՄԸԼԵՄ ԲԱՐԱՍ ՄԻԱԶԱՅՆՈՒԹԵԱՄ ԿԵՐԸՆՏՐՈՒԵՑԱԻ ԽՄԲԱԳԻՐՆԵՐՈՒ ՍԵՆՏԻՔԱՅԻ ՆԱԽԱԳԱԸ

Խմբագիրներու սենտիքայի խորհուրդի ընտրութիւնները կայացան երէկ. նախագահ Մըլիէմ Քարամ վերընտրուեցաւ ձայներու հարիւր տոկոս համեմատութեամբ. անոր ցանկը եւ ընտրուեցաւ անբողջութեամբ:

Քուէարկելու իրաւունք ունեցող սենտիքայի 1003 անդամներէն քուէարկութեան ներկայ գտնուեցան եւ մասնակցեցան 991 խմբագիրներ, որոնց շարքին՝ նախարար Մարուան Համատէ, երեսփոխաններ Ժան Օպէյտ եւ Ժորժ Տիպ Նամմէ եւ նախկին նախարարներ Էտնոն Ռիպ, Ֆատիլ Շալաք, Ֆարուք Պարպիր եւ Ժորժ Սքաֆ:

Քարամ ստացաւ 991 ձայն. Ռիպ Տրալիպ, Ժոպէֆ Քրապիլի եւ Մուհիթ Նամար՝ 953. Սալիտ Նասրէտտին՝ 954. Ուսմիհ Մուսթաքա Պայտուն՝ 952. Հապիպ Շալլուք, Թանիս Տրալպէ, Ժորժ Համ եւ Արաֆաթ Հիմպի՝ 951, իսկ Ապտէլ Քարիմ Նաթուր՝ 950 ձայն: Թուֆիք Խաթապ 953 ձայնով ընտրուեցաւ սենտիքայի հանրային յարաբերութեան ցտնօրէն:

Արդիւնքներու յայտարարութեան ետք, նախագահ ԿՕՐ. Էմիլ Լահուտ հեռաձայնեց Քարամի եւ շնորհաւորեց անոր վերընտրութիւնը, հաստատելով, որ ան արժանի է այն նախագահի պատիւին:

Խորհրդարանի նախագահ Նապիհ Պըրրի եւս Քարամի հեռաձայնեց եւ շնորհաւորելով զայն, դիտել տուաւ, որ միայն լրագրողները չեն, որ հաստատուին Քարամի, այլ բոլոր լիբանանցիները:

Քարամի հեռաձայնեցին բազմաթիւ նախարարներ, երեսփոխաններ, կուսակցապետներ եւ անձնատրութիւններ:

Արդիւնքներու յայտարարութեան ետք արտասանուած իր խօսքին մէջ, Քարամ ըսաւ, որ պիտի փոխի իր ուղեգիծը եւ պիտի

որդեգրէ նոր մը, որ կառչած է անսահման ապատութեան եւ ժողովրդավարութեան եւ կը մերժէ մանուկն դէմ որեւէ քայլ կամ կաշկանդում. «Մամլոյ անսահման ապատութեան միակ սանձը լրագրողին խիղճը պէտք է ըլլայ», եզրափակեց ան:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԻՐԱՆԻ ԴԵՍՊՈՒՆԸ

Երէկ Պիքֆայայի վանքին մէջ Արամ Ա. կաթողիկոս ընդունեց այցելութիւնը Լիբանանի մէջ իրանի դեսպան Մոհամէտ Ալի Սուպհանիի:

Շուրջ մէկ ժամ տեւած հանդիպումին քննարկուեցան Մեծի Տանն կիլիկիոյ կաթողիկոսութեան եւ իրանի իսլամական Հանրապետութեան փոխարարութեան միջեւ, իրանի հայ համայնքին եւ Լիբանանի այժմուկացութեան կապուած հարցեր: Դեսպանը իր պետութեան յատուկ գնահատանքը փոխանցեց վեհափառ Հայրապետին, այն սերտ բարեկամութեան համար, զոր վեհափառը կը շարունակէ ցոյց տալ իրանի նկատմամբ եւ այդ առիթով վերահաստատեց այն սերտ գործակցութիւնը որ գոյութիւն ունի իրանի պետութեան եւ Մեծի Տանն կիլիկիոյ կաթողիկոսութեան միջեւ:

«ԵՐԿԻՐ»-Ը՝ ԱՐՉԱԿՈՒՐԴԻ ՄԵՉ

Ինչպէս «Երկիր» իր անցեալ շաբթուան համարով հարողած էր, մեր կարգին, մեր ընթերցողներուն կը յիշեցնենք, թէ այսօր եւ յառաջիկայ Շաբաթ օր «Երկիր» լոյս պիտի չտեսնէ:

ԱՏՂԱՆՍՍԱՆ ԺԱԼԱԼԱՊԱՏԻ ՄՕՏ ՊԱՅԹՈՒՄ 26 ԶՈՂ, 80 ՎԻՐԱՒՈՐ

ՔԱՊՈՒԼ, 9 (ՌՈՅԹԸՐՁ) - Աֆղանիստանի արեւելեան ձայնալստա քաղաքին մօտ, ճամբու շինարարութեան կապակցութեամբ մը գրասենեակներուն մօտ մեծ պայտու մը տեղի ունեցած է Ռրբաթ օր, 26 զոհ եւ անլի քան 80 վիրաւոր խլելով:

Տեղացի պիտուրական հրամանատար Համի Չա-հի յայտնած է, որ պայտու մը մեծ շրջան մը քանդած է, վնասելով շուրջ 50 տուներ: Ան ըսած է նաեւ, որ տակաւին շատ կանուխ է գիտնալու, թէ ո՞վ կը կանգնի դէպքին ետին:

Քապուլի մէջ, պաշտպանութեան նախարարութեան մէկ պաշտօնատարը յայտնած է, որ յատակ չէ, թէ պայտու մի պատճառը ի՞նչ է:

ՄԵՍՐՈՊԵԱՆ ԱՐՈՒԵՍԻՅՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ 20ԱՄԵԱԿԻ ՍԵՐՈՒՆԴԻՆ ՊԱՏՈՒԱԲԵՐ 3ԱԶՈՂՈՒԹԻՒՆԸ

Ուրախութեամբ կը տեղեկացնենք, որ Հայ Կաթողիկէ Մեսրոպեան Արուեստից Վարժարանի Թեքնիք Պաշտօնա դասարանի 16 աշակերտներէն 15ը յաջողեցան 2001 - 2002 տարեշրջանի պետական քննութիւններուն, Առեւտրական Պիտութիւններ (Sales and Commercial Relations) մասնագիտութեան մէջ:

Համապատասխան վկայականի արժանացան

Ազնի Անի	Գարիիլեան Պալասանեան
Արա Բոպէն	Ռոպէն
Թամար Զօպեան	Պաշարեան
Կասիա Կարօ	Սանդուղեան (Պատուոյ յիշատակութեամբ)
Մարիա Դալիթեան	Տրիթեան (Պատուոյ յիշատակութեամբ)
Մարիա Նարեկ	Քալէնտրեան
Յանք Գապարեան	Փափագեան
Շողիկ Ռոզին	Սարգիս
Սոնա Յակոբեան	Յակոբեան
Վարանդ Ճապարեան	Զրիսեան
Զրիսեան	Սիմոնեան

Կը շնորհաւորենք մեր շրջանաւարտները այս յաջողութեան առիթով, իրենց կը մարտնչելու ուսումնական նորանոր նուաճումներ, եւ կը վերահաստատենք մեր յանձնարարութիւնը շարունակելու մեր կրթական առաքելութիւնը ի սպաս հայ ուսումնաստեց երիտաւարութեան:

ՏՆՕՒԵՆՈՒԹԻՒՆ

ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ ՎԵՐՁԻՆ ՊԱՅՄԱՆԱԺԱՄ

Բոլոր անոնք, որոնք արձանագրուած են ՌԻՖՖԱԻ Հայրենակցական Միութեան կազմակերպած շրջապտույտին՝ դէպի Հայաստան Օգոստոս 23էն Սեպտեմբեր 6, բարի ըլլան իրենց անցագրերը հասցնելու վարչութեան անդամներուն եւ տոքթ. Սկրտիչ Գերգեանին, հեռ. 03-207153, 01-253627 եւ նաեւ Աշձեան թուրք՝ հեռ. 01-261177 ամենաուշը՝ Երեքշաբթի 13 Օգոստոս:

Shams Restaurant Anjar

In a unique environment of natural beauty, everyone of us is here to serve you the best in lebanese food

كل ما في خدمتكم لتذوقوا اخصر المأكولات اللبنانية

Anjar - Bekaa - Lebanon Tel./Fax: 00961 8 620567 / 03 640947-699010

ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ 3ԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

3աւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

Գրական Հե

ՇՆՈՐՀԱԲՈՐ 70ԱՄԵԱԿՂ

Գրական թերթ

Եօթանասուն տարին կեանք մըն է: Եօթանասուն տարին նաև սեփական կենսափորձով ձեռք ձգուած ճշմարտութիւններու ուսանելի վաստակ մըն է, երբ այդ տարիները շալակի մեր դիմաց կը կանգնի կեանքի մեր ու պահին գէմ անայլայլ ու վեռակամ կանգնած, անխոցելի Եկարագիրով իր պատուանդանը նուաճած եւ մաքրարիւն անհատականութիւններու միայն վիճակուած անմահութեան ուղեւորման ասպնոված բացառիկ ծնունդ մը, իսկ երբեմն՝ նոյնիսկ գլխաւոր մարդ մը: Նոյնիսկ պարզ, բայց իրաւ մարդ մը, կամ կարճ խօսքով՝ վաւերակամ կեանք մը:

Եօթանասուն տարին կրկնակ, տասնամյակի, ինչու չէ՞ բիրապատիկ կեանք է, երբ այդ ամեակներու դափնեպսակներով կամ փշապակներով մեզի կը ներկայանայ հոսանքն ի վեր թիպարած հաւաքականութիւն մը, ժողովուրդ մը, կամ այդ ժողովուրդի 70ամեայ սեւ ու սպիտակ, «ապրած ու չապրած տարիներ»ու ողջ գումարը պատմութեան բերք մը: Իր ժամանակի հարագատ հայելին հանդիսացած եւ ժամանակին վրայ իր անջնջելի գրոշմը թողած պատկանելի հրատարակութիւն մը, ինչպէս է այսօրուամ մեր յոբելեարը՝ «Գրական Թերթ» անուն միշտ կայտառ ու լուսապայծառ շարքաթերթը:

Գրականութիւնն է թերթ: Այսօրիցն՝ սթափ, պատասխանատու եւ գուսպ ինքնագիտակցութեամբ աջակց ուրբաք առուօտ իր ժողովուրդին ներկայացող ստեղծագործական, իմացական եւ ազգային - հասարակական կայնպիսի հրատարակութիւն մը, որ մտաւորական շրջանակներու միշտ փնտռած թերթը ըլլալով հանդերձ չեղաւ միմիայն ընտրանիի մը արտօմակներուն գոհացում տուող բեմը, այլեւ՝ այն աղբիւրը, ուրկէ շուր ու լոյս ըմպեցին ժողովուրդին համեստ խաւերը, Այրարատեան աշխարհի բովանդակ հայտնութիւնը՝ իր դասակարգային եւ սերնդային բոլոր շերտերով, եւ... նոյնիսկ երկրի առաջին մակարդակի պատասխանատուները:

Պարզ այն պատճառով, ինչպէս կը վկայեն այս շարքաթերթին կապուած խմբագիրներէն ու աշխատակիցներէն երկուքը, քովի սուղ սիւնակներով, «Գրական Թերթ»ը եղաւ կեանքի վերիվայրումներուն հետ տեղատուութիւնն է մակընթացութիւնն ապրած ժողովուրդին հարգատ կենդանագիրը, ժամանակին լիաճայն խօսակերպ, բայց եւ հարագատ ձեւերով մեր ստեղծագործութիւններու անկախութիւնը պահպանողը, որ երբեք չի զոյգուած իր ստեղծագործութիւններու հետ իր ստեղծագործութիւններու անկախութիւնը պահպանողը, որ երբեք չի զոյգուած իր ստեղծագործութիւններու հետ իր ստեղծագործութիւններու անկախութիւնը պահպանողը:

րագատ կենդանագիրը, ժամանակին լիաճայն խօսակերպ, բայց եւ հարագատ ձեւերով մեր ստեղծագործութիւններու անկախութիւնը պահպանողը, որ երբեք չի զոյգուած իր ստեղծագործութիւններու հետ իր ստեղծագործութիւններու անկախութիւնը պահպանողը:

Այո, եօթանասուն տարին բացառիկ, թերեւ նոյնիսկ անկրկնելի կեանք մըն է՝ կեանքին չափ հակասական ու լիագումար իր մեղրով ու թոյնով, լացով ու ծիծաղով, պարտութիւններով ու յաղթանակներով, երբ վաստակաբեկ եօթը տասնամեակներու ակունքներուն արթուն կը հսկեն Եղիշէ Չարեանցի եւ Ակսել Բակունցի, Աւետիք Իսահակեանի եւ Դերենիկ Դեմիրճեանի, Համօ Սահեանի եւ Պարոյր Սեւակի մեծ հսկաներ: Բացառիկ կեանք է նաև անոր համար, որ «Գրական Թերթ»ը արդարօրէն հանդիսացաւ հայրենի մեր ժողովուրդին ամէնէն հարագատ եւ խիզախագոյն հրատարակութիւնը, եւ իրաւամբ եղաւ հասարակութեան բարոյական ու ազգային չափանիշները ճշդող-հաստատող վաւերական մէկ երեւոյթը հայ գրականութեան վերջին 70 տարիներուն:

Վերջապէս, հակառակ ամէն տեսակի խոչընդոտներուն, հակառակ աչքն ու ձախէն պարտադրուած կաշկանդումներուն, «Գրական Թերթ»ը ընթացաւ հաստատաբայլ ու անշեղ, վերլուծող միտքին միայն վայել համեստ յամառութեամբ, գրականութեան վերապահուած դերի խոր ըմբռնումով, ճշմարիտ արուեստագետը բնորոշող մտքի եւ հոգիի ամբողջական խիզախութեամբ, ազատութեամբ, հաւատքով:

Այդպէս եղաւ իր ուղին՝ դժուարագոյն պայմաններուն մէջ, այդպէս հանդիսացաւ՝ նաև ազատութեան եւ փոխանցման շրջանի մոխրագոյն վերջին տասը տարիներուն եւ, անկասկած, վաղը նոյնպէս պիտի շարունակէ ընթանալ խիղճն ու միտքը առաջնորդող ստեղծագործ խօսքի նուիրական միեւնոյն ուղիէն:

Ուրեմն, բարձրացնելով բաժակը կը միանաք հայրենի գրողներուն եւ մենք ալ, մեր կարգին, կը ցնծանք բարձրաձայն: - Շնորհաւոր ըլլալ եօթանասունամեակի և առաւել շնորհաւոր՝ գալիք... ամեակները, սիրելի «Գրական Թերթ»:

Ս. ԿԵՐԱՎՈՍԵԱՆ



ՄԵՐ ԽՈՐԴՈՒԲՈՐՈՒ ՈՒՂՈՒ ԵՕԹԱՆԱՍՆԱՄԵԱՅ ՀԱՅԵԼԻՆ

Թե՛ւ առաջին անգամ տպագրուել է 1933 թուականի Դեկտեմբերի 24ին «Պիոներ Կանչ» թերթում, բայց այնքան մանկամիտ ու պարզունակ է այդ ոտանաւորը, որ երբեք անլի ճիշդ կը լինի իմ գրական գործունէութեան սկիզբը համարել 1935 թուականի Մարտի 10ը: Երբ «Գրական Թերթ»ում լոյս տեսաւ իմ «Հասունութիւն» բանաստեղծութիւնը: Եւ այսպէս, մեր սերնդի մուտքը գրականութիւնն այնքան սրտացաւօրէն հովանաւորող պայծառ ու անզուգական մարդու՝ Վահրամ Ալազանի թեթեւ ձեռքով, որ թերթի խմբագիրն էր, եւ նոյնպէս իմ այսպարէզ: Ուստի «Գրական Թերթ»ն է եղել իմ գրական մկրտութեան աւագանը: Սոյն բանաստեղծութիւնը եւ իմ ոչ մի ժողովածուում չեմ գտնուել եւ այսօր, երբ տունում է թերթի 70ամեակը, չգիտես ինչու, յոբելեանական այդ տարեդարձը իմ անձնական տօնը համարելու զգացումից երեւի, մէջը ցանկութիւն առաջացաւ լոյս աշխարհ հանել 67 տարի թերթի էջերում մնացած այդ դեղնակտուց տողերը, որը գրել է 16 տարեկան Հասակում:

պատկերը: Այլապէս ինչի՞ նման է, երբ մէկը, երկուսը դառնում են քաւութեան նոխազ, իսկ միւսները ջրգեղում են ոսկեփոշով: Կարողով այդ հրապարակումները, անլի եւ հասկանում ժամանակը, Հասկանում այդ տարիներին աղէտաւոր մթնոլորտը, երբ մարդիկ՝ վախից թէ ընդհանուր տենդի մէջ իրենք իրենց կորցնելուց, խօսում ու վարում են իրենց կերպարին բոլորովին անյարիր ձեւով, եւ, սանձ, տօհմիկ մտաւորական, նրբամիտ ու զեղապաշտ ուժիւտր Լեւոն Քալանթարը, Երեւանում Ռուսական թատրոնի հիմնադրման առիթով գրում է: «Եւ միմիայն հակադեպոփոսական - նացիոնալիստական այդ վոհմանի ջախջախումից յետոյ հնարաւոր եղաւ իրականացնել Լենինեան - Ստալինեան քաղաքականութեան կիրառման այնպիսի հզօր ֆաքթորներից մէկը, որպիսին է մեր հանրապետութեան մէջ պետական ուսուցական թատրոնը»...

Այս կարգի հրապարակումները օգնում են նաև անդրադառնալու, թէ ինչպիսի անհեթեթ փորձութիւններ է ենթարկուել «Գրական Թերթ»ը, թէ մեղքի ու ապաշխարանքի ինչ դժուարին քաւարաններով են անցել նրա խմբագիրներն ու հեղինակները, մինչեւ հասել են քիչ թէ շատ բնականոն վիճակի, երբ արդէն կարողացել են ընդլայնակից հանել մեր ազատագրական շարժումների տարեգրութիւնը, մեր ազգային արժէքները, Անդրանիկին, Մեծ Եղեռնն ու Ապրիլի 24ը, մեր բախտորոշ խնդիրները:

Այս օրերին հետքերը կեանք է ապրում Հայաստանի Գրողների Միութիւնը եւ նրա պաշտօնաթերթը: Նրանք կարծես թէ զարթնել են երկարամեայ թմբկից: Չի կարելի չզննահատել նոր դեկապարտութեան ամենօրեայ ինքնանուէր ջանքերը՝ ոտի կանգնեցնելու մեր ժողովրդի կեանքում որոշիչ դեր կատարած մշակութային այդ օճախը, թեթեւացնելու կարիք է մէկ խեղդուող գործերի հոգսերը, ստեղծելու համերաշխ ստեղծագործական մթնոլորտ: Այս ամէնի մէջ մեծ է գրական մամուլի անլիքը, մամուլ, որը սիրող մթնոլորտի հայելին է ու միեւնոյն ժամանակ այդ մթնոլորտը կենդանացնող, յստակեցնող միջոցներից մէկը: Ուրախալի է, որ երիտասարդացած «Գրական Թերթ»ը գիտակ է ամենքեան նուիրում իրեն բաժին ընկած պատուարեր պարտաւորութեանը: Թող, ուրեմն, նրա եօթանասնամեակը խթան դառնայ գործելու առաւել եռանդուն, առաւել նպատակասլաց:

Չուր է եւ անարդիւնք ամէն մի յորելան, անցեալ վաստակի ամէն մի արժեւորում, եթէ չի ծառայում ներկային, չի օգնում մեր ժողովրդի հոգեւոր նորոգմանը:

ՍԻՆՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ

ԷՋԵՐ՝ ԽՄԲԱԳԻՐՆԵՐՈՒ ՅՈՒՇԱՏԵՏՐԻՆ

ԹԵՐԹԻ ՍՍՐԱՆՔԸ

ԲԱՅՅ ԱՐԳԷՆ ՈՒՇ ԷՐ...

Ամէն Ուրբաթ, երբ թերթը լոյս էր տեսնում, խմբագրին կանչում էին Կենտկոմ եւ ինչպէս հարկն էր՝ «մշակում էին»: Յիշում եմ մի օր, երբ խմբագիրը Համօ Սահեանն էր, իմ հին ընկերոջը հրաւիրեցի քաղաքից դուրս գալ: «Դու հասկանում եմ» ինչ ես ասում,- աւարկեց,- վաղը Ուրբաթ է, այդ նշանակու է, որ Կենտկոմի օր է: Ամէն Ուրբաթ կանչում են»:

Հետագայում, երբ ես էի արդէն խմբագիրը, համոզուեցի, որ Սահեանն իրաւացի էր: Ինձ էլ ամէն Ուրբաթ կանչում էին: Մի Ուրբաթ օր էլ, առաւօտ շուտ ինքն գնացի Կենտկոմ, կարծեմ թերթի համար թուղթ պիտի հայթայթէի: Գնացի եւ ահա թէ ինչի ականատես եղայ: Մտայ հրահանգիչների սենեակը՝ բոլորը նստած «Գրական Թերթ» էին կարդում: Մտայ սեկտորի վարիչի, բաժնի վարիչի սենեակները՝ «Գրական Թերթ» էին կարդում: «Էս ինչ է,- ասացի,- ամբողջ Կենտկոմը կարդում է «Գրական Թերթ» է կարդում: Բաժնի վարիչը, որ Ստեփան Վարդանեանն էր, գրականութիւնից այնքան էլ հեռու կանգնած մարդ էր եւ վատ էլ չէր տրամադրուած թերթի նկատմամբ, անկեղծօրէն խոստովանեց. «Վերեւում էլ եւ կարդում,- նկատի ունէր Կենտկոմի քարտուղարներին,- թէ չկարդան էլ, այսպէս կոչուած «բարեացակամները» կը զանգահարեն նրանց: Դէ՛ ձեր թերթում էլ միշտ զանգահարելու բան կը գտնուի: Մենք միշտ պատրաստ պիտի լինենք նրանց պատասխանելու»:

ԳՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՏԱՐԵԳԻՐԸ

Բացառիկ դեր է վերապահուած «Գրական Թերթ»ին՝ լինել ընթացիկ գրականութեան շիտակ հայելին, գրական կեանքի տարեգիրը: Իր այս առաքելութիւնը տասնամեակների միջով թերթը տարել է արժանապատուօրէն, մշտապէս պայծառակամութեամբ երկրի, ժողովրդի, գրականութեան շահերը: «Գրական Թերթ»ը թոյլ է տուել գաղափարախօսական պարտադրանքներին, եւ դա բնական է, քանզի մենք գործ ունենանք ոչ թէ դասական երկերի ընտրանու հետ, այլ կենդանի, յարափոխ, բայց օրգանիզմի հետ, որ գոյալու կերպով արձագանգում է ժամանակի իրողութիւններին: Այս

առումով իրաքանչիւր սերունդ ազնի տքնանքով ստեղծել է իր թերթը, իր պատկերով եւ մտայնութեամբ: Ամենադժուարը, թերեւս, բաժնի ընկալ սակախութեան տասնամեակի սերնդին: Պարզապէս կոյր պիտի լինել չտեսնելու-չգնահատելու համար այն ջանքերը, որ գործադրում է խմբագրակազմը՝ լուծելու ծառայած բազում խնդիրները՝ խօսքի ազատութիւնը գուցակցել խղճի ու բարոյականութեան «գրաքննութեանը», ազգայինը կամրջել ավանգարդին, դաւանել ընտրութեան բարձր չափանիշների, կասեցնել բոլոր սուղահանգները գրաւոր դրամոլական համաճարակը, իրացնել գրական ճորտարածքներ:

Եւ, վերջապէս, օրուան գերիւնդիրը՝ վերականգնել գրողի եւ գրքի անփոխարինելի դերն ու նշանակութիւնը հասարակական գիտակցութեան մէջ: Այս ցանկութիւնների մի մասը «հաշուաճում է» երկրորդ եօթանասնամեակ, հաւատով ու սոցալական բարեմաղթանքով: Թերթի յոբելեանը մեր ողջ գրական ընտանիքի տօնն է, տօն, որ ամէն Ուրբաթ ճորտաւոր է բոլորին համար: Բարի, խաղաղ անարկութիւն:

ԼԵՒՈՆ ԱՆԱՆԵԱՆ

(Հայաստանի Գրողներու Միութեան Աշխատակ)

ՈՒՐԲԵՆ ՅՈՎՍԵՓԵԱՆ

www.hamazkayin.com

ՍԱՂԱԹԷԼ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՇԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻՉ


ՀԱՄԱՑԱՆՑ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ



ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՅՔԵՐ

ՀԱՅՐԵՆԻ ԾԱՆՕԹ ԲԵՄԱԴՐԻՉ ՏՈՆ ԱՍՔԱՐԵԱՆԻ ԿԱՅՔԸ




Տիմի միջազգային բազմաթիվ փառատոններում մրցանակակիր ստեփանակերտցի 53ամեայ բեմադրիչ Տոն Ասքարեանի պաշտոնական կայքը սպառնիչ տեղեկություններ կր փոխանցեց բեմադրիչին կեանքին ու վատակին մասին:

20 տարի է ի վեր Գերմանիա հաստատված Ասքարեանի կենսագրական տուեալները, հարցազրույցները, մամուլի հրատարակումները, վիտեոները, ինչպես նաև բեմադրիչին ծրագրիները տեղադրված են արդի լրատվողական դրո՛ւթիւններով կառուցված այս կայքին մէջ:

Կայքին հասցէն է՝ Don-askarian.am

ԻՆՉՊԷՍ ԶԵՐԲԱԶԱՏԻԼ «ՀՈԹՄԷՅԼ» ԵՆԱՄԱԿԱՏՈՒՓ ՈՒՂԱՐԿՈՒՈՂ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ



Ե-նամակի հանրածանօթ դրո՛ւթիւններ օգտագործողներ լաճախ կը դիմագրաւեն «սփեմ» Ե-նամակներու մղձաւանջը: Այսպէս, համակարգչային ծանուցումի զանազան ընկերութիւններ ձեռք ձգելով ձեռք Ե-նամակի հասցէն՝ կանոնաւոր ձեռք ձգելով ձեռք կեն Ե-նամակներ, որոնք անտեղի կերպով կը խճողեն ձեռք Ե-նամակատուփը (Քիցկոյրը):

Ամէնէն աւելի տարածում գտած «հոթմէյլ» Ե-նամակի դրո՛ւթեան բաժանորդները օրական միլիոնաւոր «սփեմ» Ե-նամակներով «կր ուժարկոծուին»: Այս նեղացուցիչ երեւոյթէն ձեռքազատելու կամ առնուազան զանց մեղմացնելու համար կարելի է կատարել ստորեւ ներկայացուած գործողութիւնը:

Ա. «Քիթը» ընել «հոթմէյլ» Ե-նամակատուփին վերեւ գտնուող «options»-ին վրայ, ապա «քլիք» ընել «junk mail filter» կապի վրայ:

Բ. Այստեղ պիտի ներկայացուին 4 ընտրանքներ՝ off - low - high - exclusive. ընտրել «high»:

Այսպիսով, Ե-նամակատուփ ծանուցումի նուազ Ե-նամակներ կը ստանայ:

Յաւելեալ «մաքրագործում»-ին համար կարելի է նաև ձեռք ուղարկուած «անհանոյ» Ե-նամակներուն հասցէները «Block» ընել՝ «select» ընելով տուեալ Ե-նամակը եւ «քլիք» ընելով «Block»:

www.lemagan.com

GOLDEN ROCK

\$50- ԷՆ ՍԿԵԱԿ ՀԱՐԱՆԵՎԱԿ ՀԱՊՈՍՏԵՐ

Այս կարգով մեկնայաց կապը կը առանայ 35% դեղք

Հասցէ. Պոլսի Համուտ, Մարաշ քաղ, «Հասու-Յիրր»-նի փող: Հեռ. 01/260788

ԱՐՇԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՇՈՒԿԱՅ

ՎԻՏԷՄՆ՝ ԱՆՀԵՏԱՑՄԱՆ ՎՏԱՆՔԻՆ ԵՆԹԱԿԱՅ



«Տի. Վի. Տի. Փլեյթը»-ներ դարձած են պատմութեան ամէնէն արագ վաճառուող ելեկտրական սարքերը: Հանրութեան տրամադրութեան տակ դրո՛ւթեան նուազ քան հինգ տարի

նախատեսուի, որ առաջին անգամ ըլլալով աւելի մեծ թիւով «Տի. Վի. Տի. Փլեյթը»-ներ վաճառուելու արագութիւնը կը կրկնուի: Ար. Տի. Փլեյթը արդէն մուտք գործած են գրեթէ ամէն տուն, եւ դժուար թէ մարդիկ դիւրութեամբ կարենան բաժնուիլ անոնցմէ: «Վի. Սի. Ար.»-ը նաև օժտուած են արձանագրելու կարելիութեամբ, որուն շնորհիւ կարելի է կրկին ու կրկին արձանագրութիւններ կատարել միեւնոյն վիտեո քասէթին վրայ: Արձանագրութեան կարելիութեամբ օժտուած «Տի. Վի. Տի. Փլեյթը»-ներու սակերը մատչելի չեն ընաւ եւ կը տարուրբերին 1200-2000 տոյարի միջեւ: Մասնագէտներու նախատեսութեամբ այս գինը պէտք է նուազին հասնելով 500ի սահմանագիծին, որպէսզի «Տի. Վի. Տի. Փլեյթը»-ներ կարենան ամբողջովին փոխարինել վիտեոյի սարքերը:



ետք, «Տի. Վի. Տի. Փլեյթը»-ներ արդէն մուտք գործած են Մ. Նահանգներու բնակարաններու Արեւմտեան Եւրոպայի եւ Ճափոնի մէջ յաջորդաբար 13 եւ 10 առ հարիւր է: «Ֆորբըքը Ռիւսը» ռուսական շուկային ներքինը կու գան հաստատուել, որ «Տի. Վի. Տի. Փլեյթը»-ներ շատ աւելի արագ կը սպառին, քան տասնամեակներ առաջ յայտնուած «վիտեո փլեյթը»-ները:

Մեկնարաններ կը նախատեսեն, որ «Տի. Վի. Տի.»-ներու վաճառած ժողովրդականութիւնը պիտի շարունակէ վերելք արձանագրել: Բրիտանական ընկերութեան մը մօտաւոր գնահատումներով, այսօր Եւրոպայի մէջ գոյութիւն ունին 17 միլիոն «Տի. Վի. Տի. Փլեյթը»-ներ, իսկ հինգ տարի ետք անոնց թիւը պիտի հասնի 120 միլիոնի: Աւելին. այս տարի կը

Յամենայնդէպս, վիտեոն տակաւին իր մահականացուն չէ կնքած: 25 տարի է ի վեր հրապարակելի վրայ եղող «Վի. Սի. Ար.»-ներ արդէն մուտք գործած են գրեթէ ամէն տուն, եւ դժուար թէ մարդիկ դիւրութեամբ կարենան բաժնուիլ անոնցմէ: «Վի. Սի. Ար.»-ը նաև օժտուած են արձանագրելու կարելիութեամբ, որուն շնորհիւ կարելի է կրկին ու կրկին արձանագրութիւններ կատարել միեւնոյն վիտեո քասէթին վրայ: Արձանագրութեան կարելիութեամբ օժտուած «Տի. Վի. Տի. Փլեյթը»-ներու սակերը մատչելի չեն ընաւ եւ կը տարուրբերին 1200-2000 տոյարի միջեւ: Մասնագէտներու նախատեսութեամբ այս գինը պէտք է նուազին հասնելով 500ի սահմանագիծին, որպէսզի «Տի. Վի. Տի. Փլեյթը»-ներ կարենան ամբողջովին փոխարինել վիտեոյի սարքերը:

ԻՆՉ Ե՝ «ՏԻ. ՎԻ. ՏԻ.»Ն

«Տի. Վի. Տի.»-ն «Սի. Տի.»-ի ծաւալով սկաւառակ մըն է, որ այս վերջինէն շատ աւելի մեծ քանակութեամբ տեղեկութիւն կրնայ ամբարել: Այսպէս, մինչ «Սի. Տի.»-ի մը վրայ 640 մէկապայք տեղեկութիւն կարելի է արձանագրել, «Տի. Վի. Տի.»-ն մը կրնայ 4,7էն մինչ 17 կիկապայք արձանագրութեան տեղ տրամադրել:

Վերջերս յայտարարուեցաւ «Պուլս Իէյ Տի. Վի. Տի.»-ն աւելցնելով սկաւառակ մը, որ պիտի կարենայ ամբարել 27 կիկապայք: Այս «Տի. Վի. Տի.»-ն հրապարակ պիտի իջնէ Երկու տարիէն: Թեւեւ կարելի է վստահեցնել, թէ ժամը հասած է արբանոց նետելու «Վի. Սի. Ար.»-ները եւ շուկայ վազելով «Տի. Վի. Տի. Փլեյթը» մը գնելու, սակայն շուկայի զարգացումները հետզհետէ աւելի կը մօտեցնեն այն օրը, երբ «Վի. Սի. Ար.»-ը նոյնքան այժմեական պիտի բուի, որքան ձիւրով կարբը...:

ԱՐՇԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՄԱՑԱՆՑԻՆ ԿԱՊՈՒՈՂ ՍԱՌՆԱՐԱՆ

Ելեկտրական առանձին սարքեր համացանցին կապելու արհեստագիտութիւնը արդէն փորձառական ժամանակաշրջանը աւարտած է եւ դրուած է հանրութեան տրամադրութեան տակ:




Ելեկտրական որեւէ սարքի համացանցի կապելու տարբերակը այսօր արդէն կարելի է գտնել շուկայի վրայ: Այս սարքերը ստակական կապելու են, այլ, արդիական սարքերու բոլոր առաւելութիւններով օժտուած ըլլալու կողքին, ունին նաև համացանցի միջոցով բանելու առաւելութիւնը:

Օրինակի համար, «Էլ. ձի.» ընկերութեան արտադրած «Ինթըրնէթ Ռեֆրիքթը» համացանցի կապուող սառնարանը: Աշխարհահռչակ մակնիշով որեւէ սառնարանի տուեալներով օժտուած այս սարքը ունի նաև ընթացիկ գործածութեան համար «15 ինչ» պատկերասփիւռ մը, որ կրնայ կապուել «Տի. Վի. Տի. Փլեյթը»-ներուն: Սառնարանը օժտուած է նաև ռիմոթ քոնթրոլով: Համացանցի միջոցով կարելի է որեւէ փոփոխութիւն կատարել սառնարանի աշխատանքի ձեւին մէջ:

«ՄԱՅՔՐՈՒԻՅՎ»...

Համացանցին կապուող «Մայքրոսոֆթ»-ը եւս սկսած է փոխարինել խոհանոցի մէջ բազմած «աւանդական» «մայքրոսոֆթ»-ները: Այսպէս, օրինակ, «Էմ. ձի. 5682 Էմ. Էլ.» «մայքրոսոֆթ»-ը համացանցին կապուելով՝ կրնայ շարք մը գործողութիւններ կատարել: Սարքին միջոցով կարելի է նաև համացանցին արձանագրել «մայքրոսոֆթ»-ով պատրաստուող ճաշերու 100 խոհադիրներ:



